ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2022 թվականի N 374-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 07-Ի N 182-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված կարգի 19-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Ծաղկաձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2022 թվականի սեպտեմբերի 20-ի N 1 նիստի որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2021 թվականի հունիսի 07-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին»* N 182-Ա որոշման N 2 հավելվածի 1-ին կետում ***«Արմենուհի Առաքելյան»*** և ***«Նունե Նիկոլյան»*** բառերը համապատասխանաբար փոխարինել ***«Ծողիկ Խաչատրյան»*** և ***«Արաքսյա Խաչատրյան»*** բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Ծաղկաձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն որոշման մասին իրազեկել «Ծաղկաձորի միջնակարգ դպրոց» և «Զրառատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհրդին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 26
ք. Հրազդան